ՈՍՍԿ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ինստիտուցիոնալ կարողությունների մասին

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը	Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա
Կրճատ անվանումը	ԵՊԿ
Գործունեության հասցեն	ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովայի պողոտա 1/ա
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը ժամկետը	Չի ունեցել

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով՝ ՈԱԱԿ-ի ներկայացուցիչների, փորձագիտական խմբի, գործընթացի ՈԱԱԿ համակարգողի մասնակցությամբ քննարկեց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի (այսուհետ՝ ԵՊԿ) կողմից ներկայացված ինքնավերլուծության, փորձագիտական զեկույցի, զեկույցում նշված թերությունների վերացման մասին ԵՊԿ-ի գործողությունների ծրագիրի և այդ ծրագրի վերաբերյալ փորձագիտական խմբի կարծիքի հիման վրա կազմված ԵՊԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ ՈԱԱԿ-ի եզրակացության նախագիծը:

Քննարկման արդյունքում ամրագրեց հետևյալը.

Հավատրմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	**12 մարտի 2012 թ.**
բուհի ինքնավերլուծության ներկայացում	**9 հուլիսի 2013 թ.**
փորձագիտական այցի իրականացում	**30 սեպտեմբերի-4 հոկտեմբերի 2013 թ**
փորձագիտական զեկույցի ներկայացում ԵՊԿ	**11 նոյեմբերի 2013 թ.**
թերությունների վերացման ծրագրի ներկայացում	**17 փետրվարի 2014 թ.**

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով[2]:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Գնահատումն իրականացնելիս հաշվի է առնվել, որ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ազգային դերակատարությամբ երաժշտական մշակույթի, կրթական, գիտական և ստեղծագործական 90-ամյա փորձ ունեցող եզակի հաստատություն է, որի հիմնական առաքելությունը բարձրագույն կրթության բոլոր մակարդակներով երաժշտական կրթություն ապահովելն է: 2012 թվականից ԵՊԿ-ն դարձել է Եվրոպական Կոնսերվատորիաների Ասոցիացիայի (ԵԿԱ) լիիրավ անդամ:

Իր գործունեության ընթացքում կոնսերվատորիան հավատարմագրում չի անցել: Կրթության որակի ապահովումն իրականացվել է որակի վերահսկման որոշ մեխանիզմների կիրառման միջոցով: Հավատարմագրման այս փորձարկումը ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ԵՊԿ-ի առաջին փորձն է՝ կրթական միջավայրի բավարարության, ծրագրերի իրականացման արդյունավետության, հասարակության առջև հաշվետվողականության և վերջերս ներդրված որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքի ինքնագնահատման նպատակով:

---

[1] **Հավելված 1** ՝ Փորձագիտական խմբի կազմը և ՈԱԱԿ-ի աջակցող անձնակազմը

[2] **Հավելված 2**՝ Ամփոփ գնահատում

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մասնագիտական կրթական ծրագրերը (այսուհետ՝ ՄԿԾ) համահունչ են Որակավորումների ազգային ՀՀ երաժշտական մշակութային կարիքներին, նպաստում են մշակույթի զարգացմանը, ազգային հոգևոր մշակութային արժեքների պահպանմանը, զարգացմանը և տարածմանը, միտված է դառնալու ուսանողակենտրոն կրթօջախ, պատրաստելով ժամանակի պահանջներին համապատասխան բարձրակարգ արվեստագետ-մասնագետներ, որը բխում է ԵՊԿ-ի առաքելությունից և ամրագրված է Ռազմավարական ծրագրում:

Կոնսերվատորիան արտոնված է իրականացնել բարձրագույն մասնագիտական կրթություն 3 հիմնական՝ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորման աստիճանների շնորհմամբ և հետբուհական կրթական ծրագրերով, «Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ, որն ունի 5 մասնագիտացում: Մասնագիտության կրթական ծրագրերը բովանդակային և ստեղծագործական առումով հուսալի են և համապատասխանում են պետական կրթական չափորոշչին: Թեև կատորաղական և ստեղծագործական մասնագիտացումների շրջանավարտները կարողանում են ուսումը շարունակել արտերկրում, սակայն առկա բովանդակային որոշ անհամապատասխանությունները նմանատիպ այլ հաստատությունների կրթական ծրագրերին խոչընդոտում են ուսանողների ու դասախոսների ազատ շարժունությանը և միջազգայնացմանը:

Մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացման և միջազգայնացման նպատակով Համաշխարհային Բանկի տրամադրած դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվում է միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն և նմանատիպ կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն: Ընթացքի մեջ է դասընթացների ծրագրերի նկարագրումը ուսումնառության վերջնարդյունքներով: Ելնելով բուհի առանձնահատկություններից, ուսանողների անհատական ուսուցման քաղաքականությունը երաշխավորում է մասնագիտական առարկաների դասավանդման և ուսումնառության մեթոդների միջև համապատասխանությունը: Կան շոշափելի փաստեր, որ դասավանդման մեթոդներն արդյունավետ են:

Կոնսերվատորիայում իրականացվող հետազոտության արդյունքների կիրառելը դասավանդման պրոցեսում և մագիստրատուրայի ուսանողներին հետազոտության մեջ ներգրավելը վկայում են դասավանդման և հետազոտության միջև կապի առկայության մասին:

Կոնսերվատորիան, ունենալով սահմանափակ ֆինանսական հնարավորություններ, կարողացել է ստեղծել արդյունավետ ուսումնական միջավայր: Առկա ռեսուրսները, հարմարությունները (ստեղծված են հարմարություններ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար) և գույքը նպաստում են սահմանված առաքելության և կրթական ծրագրի իրականացմանը: Զարգացման հնարավորությունները, սակայն, խնդրահարույց են:

ԵՊԿ-ն իր առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ի նպատակներն իրականացնելու համար ունի անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ՝ ավանդական երաժշտական, կոնսերվատորիական կրթություն ապահովելու համար: Դասախոս-ուսանող հարաբերակցությունը չափազանց բարձր է և արդարացված չէ: Ուսումնասիրելով արտասահմանյան նմանատիպ բուհերի կառուցվածքը, կոնսերվատորիան 2012 թ.-ից սկսել է օպտիմալացնել իր աշխատակազմը:

Դասախոսների 98%-ը Կոնսերվատորիայի շրջանավարտներ են, ինչն ապահովում է պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունը: Բայց միևնույն ժամանակ, լինելով միակը հանրապետությունում և չունենալով մրցակցություն ներսում, այն կարող է խոչընդոտել արտաքին միջավայրի հետ կապը՝ ստեղծելով փակ շրջան:

Հետագա զարգացման և որակի բարելավման համար բուհը պետք է նպատակուղղված լինի դեպի նմանատիպ միջազգային այլ հաստատություններ, ապահովի ուսանողների և դասախոսների շարժունությունը: Դասախոսները որոշակի չափով ծավալում են միջազգային համագործակցություն, բայց նրանց գործողությունները ոչ պաշտոնական են և համակարգված չեն: Դեռևս բարձր է կենսաթոշակային տարիքի դասախոսների թիվը, ինչը դժվարացնում է երիտասարդ կադրերի առաջընթացը: ԵՊԿ-ում առկա է դասախոսների պարբերական վերապատրաստման խնդիրը՝ հատկապես մանկավարժական կարողությունների զարգացման ուղղությամբ:
Պրոֆեսորադասախոսական կազմը զբաղվում է հետազոտական աշխատանքներով, սակայն քիչ են նրանց կողմից իրականացվող միջազգային մակարդակի աշխատանքները:

ԵՊԿ-ն իրականացնում է հետազոտական բազմաճյուղ գործունեություն: Հետազոտությունը՝ լինելով ԵՊԿ-ի գործունեության կարևորագույն ոլորտներից մեկը, նպաստում է բուհի առաքելության և նպատակների իրագործմանը: Հետազոտական գործունեության արդյունքները մեծապես ներդրվում են ուսումնական գործընթացում:

Կոնսերվատորիայում մտահոգված են ուսանողների ուսումնառությամբ, միջավայրի ուսանողակենտրոնության և տրամադրվող կրթության վերաբերյալ ուսանողների տեսակետով: ՈՒսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության գործող մեխանիզմները ներկայումս ապահովում են դիմորդների կայուն հոսք:

Ուսանողների կրթական կարիքների վերահանման արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԵՊԿ-ում կրթությունը հիմնականում իրականացվում է անհատական պարապմունքների միջոցով: Ուսանողները հիմնականում գոհ են իրենց բարձրացրած հարցերի ներկայացման մեխանիզմներից, հարցերի լուծումներից: Ուսանողներն ակտիվ ներգրավված են հետազոտություններում, հատկապես մագիստրոսի աստիճանում:

Ուսանողներն ունեն դրական վերաբերմունք իրենց տրամադրվող կրթական ծառայությունների և կրթության ընդհանուր որակի հարցում: Նրանք թեև հստակ չեն գիտակցում բարձրագույն երաժշտական կրթության ոլորտում առկա հնարավորությունները, բայց, միևնույն ժամանակ, հստակ է, որ նրանք ակտիվ են ղեկավար օղակներում և ուզում են որոշակի փոփոխություններ անել:

Կոնսերվատորիայի կառավարման համակարգն անցյալում լավ ծառայել է իր նպատակին: Սակայն ներկայումս այն ներքին և արտաքին նոր մարտահրավերների առջև է կանգնած, որոնք պահանջում են ավելի հիմնավորված, ուսանողակենտրոն մոտեցումներով, ավելի հաշվետվողական որոշումների կայացման գործընթացներ, լրացուցիչ ռեսուրսներ և լավ տեղեկատվական համակարգ: ԵՊԿ-ն կառուցվածքային փոփոխությունների իրականացման գործընթացում է, և նոր համակարգի արդյունավետության մասին կարելի է դատել որակի կառավարման սկզբունքով իրականացված գործընթացների մեկ շրջափուլի արդյունքների վերլուծությունից հետո միայն:

Կոնսերվատորիայի բոլոր մակարդակներում կարևորում են կրթության որակը և որակի ապահովումը, չնայած ներկայումս դա ավելի շուտ պայմանավորված է արտաքին պահանջներով: Բուհում տրամադրվել են մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ գործընթացների կազմակերպման համար: Որակի ապահովման ներքին համակարգը կայացման փուլում է: Ճիշտ է, ընթանում են որոշակի գործընթացներ, սակայն թույլ է շահակիցների մասնակցությունը, և հիմնական մեխանիզմները դեռևս պետք է մշակվեն:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

1. ԵՊԿ–ի ներգրավվածությունը հանրապետությունում երաժշտական միջավայրի ստեղծման գործում:
2. Բարեփոխումներին վճռական տրամադրված առաջադեմ ղեկավար կազմի առկայությունը: Սեփական թույլ կողմերի գիտակցումը և դրանք շտկելու ու բարելավելու պատրաստակամությունը:
3. Մասնագիտական բարձր որոկավորմամբ պրոֆեսորադասախոսական կազմ, որն ընդգրկված է կրթական ծրագրի կազմման և ուսանողների ուղղորդման գործընթացներում:
4. Կրթական ծրագրի համար նախանշված վերջնարդյունքների համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին, լավ կառուցված ունեցող ավանդական ուսումնական պլանների առկայությունը:
5. Երաժշտագիտության, հայկական ժողովրդական երաժշտության և հոգեվոր արժեքների պահպանման և տարածման ուղղությամբ իրականացվող հետաղոտական գործունեությունը: Հետազոտության արդյունքների լայնորեն օգտագործումն ուսուցման գործընթացում:
6. Ուսանողների ներգրավվածությունը բոլոր մակարդակներում: Ուսանողների ձայնի լսելիությունը և նրանց ազդեցությունը որոշումների կայացման վրա:
7. ԵՊԿ-ի ուսանողների ակտիվ մասնակցությունը տարբեր երաժշտական կոլեկտիվների կազմում՝ միջազգային տարբեր փառատոներին, մրցույթներին, համերգներին:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

1. Պրոֆեսորադասախոսական կազմի բարձր տարիքային ցենզը, ինչը կարող է հանգեցնել ծրագրերի իրականացման և դասավանդման մեթոդաբանության կոնսերվատիվիզմի:
2. Ուսումնական պլանները ճկուն չեն, դրանցում թույլ է արտահայտված կամընտրականությունը: Դրանք դեռևս հնարավորություն չեն տալիս միջազգայնացմանը և ուսանողների ու դասախոսների շարժունությանը:
3. Միջազգային գործունեության ֆինանսավորման բացակայությունը:
4. ԵՊԿ շենքային պայմաններն այս պահին թեև բավարար են, սակայն կարող են խոչնդոտել հաստատության հետագա զարգացմանը՝ համերգասրահի, մարզադահլիճի, հանրակացարանի բացակայությունը, երաժշտական գործիքների մակարդակը պետք է լինի շատ ավելի բարձր:
5. Գյումրու մասնաճյուղը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաքելություն և նպատակներ.

1. Ձևակերպել հակիրճ առաքելություն, որը կարտացոլի բուհի իրական ձգտումը՝ լինելու կամուրջ արևելյան և արևմտյան Եվրոպայի մշակույթների միջև, տարածաշրջանային նշանակության կենտրոն, տարբեր մշակույթների խաչմերուկ (իսլամական, արևմտյան, արաբական, պարսկական), հայաստանյան երաժշտության և երաժշտական ավանդույթների դեսպանն աշխարհում, ինչպես նաև պահպանելով և զարգացնելով դասական երաժշտության կատարման լավագույն ավանդույթները:
2. Առաքելության առանձին ձևակերպում տալ ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի համար:
3. Մշակել առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման ընթացակարգեր, ՌԾ-ի պարբերաբար մշտադիտարկման մեխանիզմներ: Հարցաթերթիկներն առավելագույնս համապատասխանեցնել բուհի առաքելության և ռազմավարական ծրագրի իրականացման արդյունավետության գնահատմանը:

Կառավարում ու վարչարարություն.

4. Վերանայել հարցումները և գտնել ուղիներ, որոնք թույլ կտան վերհանել բուհի նպատակների և իրական վիճակի միջև առկա հակասությունները, շտկել դրանք և ամրապնդել բուհի ուժեղ կողմերը:
5. Մշակել բուհի գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմներ:
6. Գտնել տեղեկատվության տարածման արդյունավետ միջոցներ: Այդ նպատակով լայնորեն պետք է օգտագործել կայք-էջը:

Մասնագիտության կրթական ծրագրեր.

7. Հաստատությունը պետք է ուսումնասիրի դասավանդման և ուսումնառության տարբեր ժամանակակից մեթոդներ՝ ուսումնական պլաններն արդիականացնելու և միջազգային պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:
8. Ուսանողների գիտելիքների գնահատման համար պետք է հիմք ծառայեցնել ուսումնառության վերջնարդյունքները:
9. ՄԿԾ-ի մշակման, բարելավման գործում մեծացնել ամբիոնների դերը:

Ուսանողներ.

10. Մշակել դիմորդների հավաքագրման, մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ:
11. Ձևավորել ուսումնական խորհրդատուների ինստիտուտ:
12. Ցանկալի է բուհում ունենալ կարիերայի կենտրոն կամ դրան փոխարինող օղակ:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ.

13. Անհրաժեշտ է ունենալ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման և խրախուսման ընթացակարգեր:
14. Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական զարգացման քաղաքականություն, կազմակերպել պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումներ՝ հատկապես մանկավարժական կարողությունների զարգացման ուղղությամբ:
15. Արդյունավետ դարձնել ուսանողական հարցման արդյունքների հետադարձ կապը:
16. Առանձնակի ուշադրության առարկա դարձնել բուհի սկսնակ դասախոսների գործունեության կազմակերպումը:

Հետազոտություն և զարգացում.

17. Քայլեր ձեռնարկել բուհի հետազոտական աշխատանքների արդյունքների միջազգայնացման համար:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ.

18. Խթանել բոլոր ջանքերը՝ ուղղված բուհի տարածքում պատշաճ համերգասրահի կառուցմանը:
19. Ուսումնասիրել և գնահատել բուհի ռեսուրսային բազայի արդյունավետությունը:
20. Բարելավել ԵՊԿ-ի Գյումրու մասնաճյուղի ռեսուրսային բազան:

Հասարակական պատասխանատվություն.

21. Ավարտին հասցնել վեբ-կայքի վերակառուցման աշխատանքները և երաշխավորել դրա պատշաճ պահպանումը:
22. Ֆորմալիզացնել շրջանավարտների հետ կապն ու նրանց հետ կապված գործողությունները:
23. Ուսումնասիրել գործող մեխանիզմների արդյունավետությունը:

Արտաքին կապեր և միջազգայնացում.

24. Լրջորեն խորհել այս ոլորտում բուհի առկա վիճակի մասին և կայուն քայլեր ձեռնարկել իրավիճակը բարելավելու համար:
25. Մշակել փորձի փոխանակմանը, միջազգային կապերի զարգացմանը նպաստող հստակ քաղաքականություն, շեշտադրելով բուհի միջազգայնացումը:
26. Մասնագիտության կրթական ծրագիրը մոտեցնել միջազգային չափանիշներին:
27. Ապահովել ներքին շահակիցների օտար լեզվի իմացության բավարար մակարդակը:

Որակի ներքին ապահովման համակարգ.

28. Ապահովել սահմանված ընթացակարգերի լիարժեք կիրառելիությունը:
29. Որակի ապահովման գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ընդլայնել մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները:
30. Որակի մշակույթի ձևավորման համար ապահովել ավելի շատ շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը, հատկապես դասախոսական կազմի:

31. Մշակել որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման կանոնակարգն ու հետադարձ կապի մեխանիզմները և ապահովել դրանց կիրառելիությունը:
32. Ամրապնդել կառավարման և որակի ապահովման համակարգերի կապը, մշակել բուհի կառավարման և վարչարարության որակի ապահովման ընթացակարգեր:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

Իրականացվել է նաև համալսարանի գործընկերային գնահատում միջազգային չափանիշներին համապատասխան, որը միտված է բուհի միջազգային մակարդակով մրցունակության բարձրացմանը և համալսարանի ԵԲԿՏ ինտեգրմանը:

Դիտարկումներ՝

Ուսումնական հաստատությունը միանշանակորեն գտնվում է անցումային փուլում: Տպավորություն է ստեղծվում, որ Կոնսերվատորիան զգուշորեն է մոտենում նորարարություններին:

Պրոֆեսորադասախոսական կազմը բավականաչափ բաց չէ երաժիշտների համար առկա կարիերայի այլ հնարավորությունների հարցում:

Ուսումնական պլանների մշակումը համեմատաբար պահպանողական է: Պրոֆեսորադասախոսական կազմը պետք է որդեգրի որոշակի լայն (արտաքին փորձը հաշվի առնող) մոտեցում ուսումնական պլանների բովանդակությունն ու իրականացման մեթոդները սահմանելիս:

Չկա միջազգայնացման ռազմավարություն (հատկապես արտասահմանյան ուսանողների հավաքագրման): Դասախոսները որոշակի չափով ծավալում են միջազգային համագործակցություն, բայց նրանց գործողությունները ոչ պաշտոնական են:

Հաստատությունում կա որակի բարելավման բաժին, որն ունի երկու աշխատակից: Սա, որոշ առումով, երաշխավորում է որակի շարունակական բարելավման գործընթացի կայունությունը, պարզապես անհրաժեշտ է տրամադրել բավարար ֆինանսավորում:

Այս բուհի ամենաուժեղ կողմերից մեկը հետազոտական գործունեությունն է հայկական՝ ավանդական և ժամանակակից երաժշտության ոլորտում: Գիտական և ստեղծագործական հետազոտությունը բավականաչափ զարգացած է: Ժողովրդական երաժշտության ամբիոնում իրականացվող տպավորիչ հետազոտական գործունեությունը պետք է գնահատել:

Խորհրդատվությունները

- Սահմանել յուրաքանչյուր դասընթացի հիմնական առանձնահատկությունները, ինչպես նաև փնտրել ուղիներ դրանց զարգացման և խթանման համար:
- Բուհը պետք է առավել հստակ սահմանի իր ինքնությունն ու նպատակները, ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ առանձին կրթական ծրագրերի մակարդակով:

- Անհրաժեշտ է մշակել և կիրառել ուսումնառության արդյունքներ, հաշվի առնելով Կոնսերվատորիաների եվրոպական ասոցիացիայի մշակած ուսումնառության արդյունքները և Դուբլինյան նկարագրիչները:
- Հաստատության առաքելությունն է ստեղծել ուսանողակենտրոն ուսումնառության միջավայր: Հետևաբար, մենք անկեղծ խոհուրդ ենք տալիս բուհին ճկուն դարձնել ուսումնական պլանը՝ ուսանողներին տալով հնարավորություն ազատ ընտրելու կամընտրական առարկաներ՝ իրենց հիմնական առարկայական ոլորտից դուրս, ինչպես նաև մասնակցելու տարբեր ծրագրերի/ նախագծերի և դրանց համար ստանալու կրեդիտներ:
- Գնահատման չափանիշները պետք է կապված լինեն այն ուսումնառության արդյունքների հետ, որոնք ուսանողները պետք է ձեռք բերեն: Գնահատման սանդղակները պետք է ուսումնասիրվեն անոմալիայի/անկանոնության (anomaly) տեսանկյունից. դրանց միջև պետք է լինի հստակ փոխկապակցում, ինչպես նաև այլ առարկաների համապատասխան սանդղակների հետ:
- Ֆակուլտետները/բաժինները պետք է ապահովեն հետազոտությունների արդյունքները ուսումնական պլաններում արտահայտելու մեխանիզմներ:
- Սահմանել, թե ինչ դեր պետք է ունենա հետազոտությունը ուսանողների կրթության մեջ:
- Բյուջեի բաշխում:
- Երաժշտական գործիքների թիվը բավարար է, բայց դրանց մակարդակը պետք է լինի շատ ավելի բարձր:
- Գրադարանում արտասահմանյան գրականության պակաս կա, հավանաբար, բուհը չի անդամակցում որևէ հետազոտական տվյալների բազաների:
- Անհրաժեշտ է ավելացնել գրադարանի և ձայնադարանի աշխատանքային ժամերը՝ ուսանողներին բաց մուտք ապահովելու համար:
- Պետք է ապահովել ուսանողների, նախկին ուսանողների և մասնագիտական մարմինների առավել համակարգված ներգրավում դասընթացների մշակման և վերանայման գործընթացներում, քանի որ նրանց տված արձագանքը/հետադարձ կապը շատ կարևոր է՝ստուգելու դասընթացի համապատասխանությունը և թե ինչպես է այն ընկալվում տարբեր շահակիցների կողմից:
- Ուսանողներն ու դասախոսները պետք է տեղեկացվեն հարցումների արդյունքների և դրանց հիման վրա իրականացված քայլերի վերաբերյալ:
- Կապ մասնագիտական ոլորտի հետ. անհրաժեշտ է մշակել մեխանիզմ, որի միջոցով կքննարկվի և կպլանավորվի համագործակցությունը մասնագիտության ներկայացուցիչների հետ՝ նրանց արձագանքը շրջանավարտների և ուսումնական պլանների վերաբերյալ ստանալու նպատակով, ինչը կնպաստի դասավանդման որակին և համապատասխանությանը տվյալ մասնագիտությանը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՈՒՀԻ ԾՐԱԳԻՐԸ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ընդունում է, որ փորձագիտական խմբի կողմից տրամադրված խորհրդատվությունները բուհի ռազմավարության շրջանակներում են, և ներկայացրել է «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիր և ժամանակացույց» (այսուհետ՝ Ծրագիր)՝ հաստատված Գիտական խորհրդի կողմից 13.02.2014թ.:

Փորձագիտական խումբն, ուսումնասիրելով թերությունների վերացման ծրագիրը, եզրակացրել է.

1. Միջոցառումների ծրագրի համաձայն՝ բուհն ընկալել, ընդունել և հանձն է առել իրականացնել Հավատարմագրման բոլոր տասը չափանիշների տիրույթներում նկարագրված խնդիրների շուրջ փորձագիտական խմբի կողմից տրամադրված բոլոր խորհրդատվությունները. Հրատապ փոփոխություններ պահանջող բոլոր խորհրդատվությունները ներառված են պլանում: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ բուհի կողմից թույլ է անդրադարձը միջազգային փորձագետների կողմից առաջադրված գործընկերային խորհրդատվություններին: Օրինակ.
   - ✓ Բուհը չի նախատեսել քայլեր միջազգայնացման ռազմավարության (հատկապես արտասահմանյան ուսանողների հավաքագրման) մշակման ուղղությամբ:
   - ✓ Չեն անդրադարձել նաև ուսումնական պլանի ճկունությանը, որն ուսանողներին հնարավորություն կտա ազատ ընտրելու կամընտրական առարկաներ՝ իրենց հիմնական առարկայական ոլորտից դուրս, ինչպես նաև մասնակցելու տարբեր ծրագրերի/ նախագծերի և դրանց համար ստանալու կրեդիտներ:
   - ✓ «Ենթակառուցվածքը և ռեսուրսները» տիրույթում թեև ընկալվել է ԵՊԿ-ի տարածքում համերգասրահի կառուցման կարևորությունը և արդեն ղեկավարության կողմից մշակվել է երկարաժամկետ ծրագիր ու իրականացվել են համապատասխան քայլեր, սակայն դրանք արտահայտված չեն գործողությունների պլանում:

   Հետևաբար, կարիք կա հատուկ անդրադարձ կատարել դրանց:
2. Բուհի գործողությունների ծրագրում առկա է գործողությունների հստակ ծրագիր՝ յուրաքանչյուր ռազմավարության համար:
3. Միջոցառումների մեծ մասի հաջորդականությունը կազմվել է տրամաբանորեն:
4. Բոլոր գործողությունների համար հստակ նշված է պատասխանատու թիմը, պատասխանատու անձը, մատնանշված են ֆինանսական ռեսուրսները:
5. Հստակ է, թե ինչպես պետք է իրականացնել քայլերի մեծ մասը: Քայլերի մեծ մասը ներառում է իրատեսական ժամկետներ, թեև արտաքին կապեր և միջազգայնացում չափանիշում ժամկետները նշված չեն:

6. Յուրաքանչյուր քայլի համար հիմնականում նախատեսվում է կիրառել մեկ չափման ցուցիչ՝ որոշելու հաջող իրականացումը, ոչ մի չափման ցուցիչ չի կիրառվում ազդեցությունը գնահատելու համար:
7. Ներկայացված ծրագրում զգալի են տեխնիկական վրիպակները, տպագրական սխալները, որոնք շտկման կարիք ունեն:

Եզրահանգում. Փորձագիտական խումբը գտնում է, որ Ծրագրի հիմնական մասի իրականացումը ռիսկեր չի պարունակում: Նրա հաջող իրականացման արդյունքում մոտակա երկու տարվա ընթացքում մշակված կլինեն հիմնական ոլորտներում համալսարանի գործողությունները կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերը և սկսված կլինեն հիմնական գործընթացները, որից հետո կարելի է անդրադառնալ դրանց ազդեցության և արդյունավետության գնահատմանը:

Ելնելով վերոգրյալից, ՈԱԱԿ-ը Հավատարմագրման հանձնաժողովին առաջարկում է իր որոշման մեջ խթանել ԵՊԿ-ին՝

1) առաջնահերթ լուծում տալ **«Արտաքին կապեր և միջազգայնացում»** ոլորտում առկա խնդիրներին, ինչպես նաև *Մասնագիտության կրթական ծրագրեր, Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, Ենթակառուցվածքներ և ռեսուրսներ, Որակի ներքին ապահովման համակարգ* ոլորտների անհրաժեշտ բարելավմանն ուղղված խորհրդատվություններին,
2) նկատի ունենալով ԵՊԿ-ի գործունեության միջազգայնացման հավակնությունները՝ վերանայել Ծրագիրը, հաշվի առնելով միջազգային չափանիշներին համապատասխան գործընկերային գնահատման արդյունքները և խորհրդատվությունները,
3) բուհի կողմից ներկայացված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի վերանայման ժամանակ հաշվի առնել սույն եզրակացության մեջ նշված դիտողությունները ծրագրի վերաբերյալ:

ՈԱԱԿ-ը գտնում է, որ առաջարկվող բարեփոխումները կնպաստեն ինքնավերլուծության զեկույցում ներկայացված համալսարանի հավակնությունների իրականացմանը և հիմք կհանդիսանան հաջորդող գնահատման համար:

Փորձագ. խմբի ղեկավար	**ՈԱԱԿ Համակարգող**
Գուրգեն Հովհաննյան	**Անահիտ Ութմազյան**

Հավելված 1

Փորձագիտական խմբի կազմը.

1. **Գուրգեն Հովհաննիսյան**, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևանի պետական համալսարանի ուսումնամեթոդական վարչության բակալավրիատի բաժնի վարիչ /փորձագիտական խմբի ղեկավար/:
2. **Աննա Երզնկյան**, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի դեկան:
3. **Գրզեգորշ Կուրզինսկի**, Կոնսերվատորիաների Եվրոպական ասոցիացիայի (AEC) հավատարմագրման հանձնաժողովի անդամ, Վրոցլավի Կարլ Լիպինսկի երաժշտական ակադեմիայի նախկին ռեկտոր / Լեհաստան/:
4. **Միստ Սոռկելսոտտիռ**, Իսլանդիայի արվեստների ակադեմիայի երաժշտության ֆակուլտետի դեկան, Կոնսերվատորիաների Եվրոպական ասոցիացիայի (AEC) Որակի բարելավման կոմիտեի նախագահ:
5. **Սոնա Տեր-Մինասյան,** Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Գեղարվեստական կրթություն» ֆակուլտետի երաժշտության բաժնի մագիստրատուրայի ուսանողուհի:

ՈԱԱԿ-ի աջակցող անձնակազմ

- **Անահիտ Ութմազյան**, ՈԱԱԿ-ի աշխատակազմի ղեկավար, ԵՊԿ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի համակարգող,
- **Ալինա Խաչիկյան**, ՈԱԱԿ-ի ինստիտուցինալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ավագ մասնագետ՝ թարգմանիչ,
- **Անի Մկրտչյան**, կրթության կառավարման մագիստրոս, ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման պատասխանատու, քարտուղար:

Հավելված 2

ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ[3]

Փորձագիտական խումբն իր գնահատումը ըստ հավատարմագրման չափանիշների ներկայացրել է հետևյալ աղյուսակով.

ՉԱՓԱՆԻՇ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
1. Առաքելություն և նպատակներ	ԲԱՎԱՐԱՐ
2. Կառավարում ու վարչարարություն	ԲԱՎԱՐԱՐ
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	ԲԱՎԱՐԱՐ
4. Ուսանողներ	ԲԱՎԱՐԱՐ
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	ԲԱՎԱՐԱՐ
6. Հետազոտություն և զարգացում	ԲԱՎԱՐԱՐ
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	ԲԱՎԱՐԱՐ
8. Հասարակական պատասխանատվություն	ԲԱՎԱՐԱՐ
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	ԱՆԲԱՎԱՐԱՐ
10. Որակի ներքին ապահովման համակարգ	ԲԱՎԱՐԱՐ

[3] Գնահատումը կատարելիս փորձագիտական խումբը հետևել է «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգին» և Փորձաքննության անցկացման ձեռնարկում նկարագրված ընթացակարգին՝ իրականացնելով նախ չափորոշիչների, ապա նաև չափանիշների գնահատում: Կիրառվել է **«անբավարար» և «բավարար»** սանդղակը:

Փորձագիտական խումբը գնահատելիս օգտվել է հետևյալ սկզբունքներից.

- **անբավարար է,** եթե չափանիշի պահանջներին չի համապատասխանում, նման ձևով շարունակելն անթույլատրելի է, և հրատապ բարելավումների անհրաժեշտություն կա,
- **բավարար է,** եթե համապատասխանում է չափանիշի պահանջներին, չնայած որ կարող է լինել բարելավման անհրաժեշտություն: